ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29 » մայիսի 2018 թվականի N 41

ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մրգաշեն համայնքում հաստատել.

1) Աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) ԱՌԿ խորհրդի աշխատակարգը՝ համաձայն հավելված N 2-ի.

2. Խորհրդի անդամներին՝

3) մինչև սույն թվականի հուլիսի մեկը մշակել Մրգաշեն համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանը.

4) յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի տասնհինգը իրականացնել համայնքի ԱՌԿ պլանի ճշգրտում:

3. ԱՌԿ խորհրդի ղեկավարի տեղակալ Սայադ Սայադյանին՝ սույն հրամանի 1-ին կետով ստեղծված ԱՌԿ խորհրդի ներգրավված յուրաքանչյուր անձի կամ անձանց փոփոխության դեպքում 5-օրյա ժամկետում ներկայացնել սույն որոշման փոփոխման վերաբերյալ որոշման նախագիծ:

4. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՐԱՄՅԱՆ

2018թ. մայիսի 29
գ.Մրգաշեն

Հավելված N 1
Մրգաշեն համայնքի ղեկավարի
«29» մայիսի 2018թ-ի N 41 որոշման

ԿԱԶՄ
ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Համայնքի ԱՌԿ խորհրդի կազմը՝

1. խորհրդի ղեկավար՝ Արամայիս Արամյան /համայնքի ղեկավար/,
2. խորհրդի ղեկավարի տեղակալ-տարհանման և պատսպարման պատասխանատու՝ Սայադ Սայադյան /համայնքի ղեկավարի տեղակալ/,
3. խորհրդի քարտուղար՝ Շողիկ Ղազարյան ,
4. խորհրդի անդամներ՝
   1) ավագանի Մարտիկ Խաչատրյան,
   2) ավագանի Դավիթ Հակոբյան,
   3) ավագանի Մնացական Ասատրյան,
   4) ոլորտային պատասխանատուներ՝

ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝ Գագիկ Մուրադյան,
բ. հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ Լյուդմիլա Մարտիրոսյան,
գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ Գարեգին Մարկոսյան,
դ. կապի և տեղեկատվական փոխանակման պատասխանատու՝ Ալբերտ Պողոսյան,
ե.բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Ազնիվ Հովհաննիսյան,
զ. կենսապահովման կազմակերպման պատասխանատու՝ Հրանուշ Համբարձումյան,
է. կոմունալ-էներգետիկ ապահովման պատասխանատու՝ Արշավիր Ասատրյան,
ը.ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Գարեգին Մուրադյան,
թ. դիակների ճանաչման և հուղարկավորման կազմակերպման և հաշվառման պատասխանատու՝ Լորետա Սաֆարյան,
ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ Գրիգոր Գրիգորյան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՐԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20 » հունիսի 2018 թվականի N 42

ՅՈՒՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԽՆԴՐԱՆՔԸ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշումը և 2006թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի 33,34 կետերի պահանջները և այն հանգամանքը, որ Մրգաշեն համայնքի 1-ին փողոց 26-2 հասցեում գտնվող 0.0024հա մակերեսով, 0028-0046 ծածկագրով համայնքային հողամասի վրա Յուրիկ Սարգսյանի կողմից ինքնակամ կառուցված ավտոտնակը արտաքին չափերով 24.0քմ մակերեսով, չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օտարման կամ անվտանգության թաղամասի կառուցապատման պլաններին և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանված շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը՝ *որոշում եմ*

1. Համապատասխան վճարով ճանաչել օրինական գյուղ Մրգաշեն 1-ին փողոց 26-2 հասցեում գտնվող համայնքային սեփականության հողամասում ինքնակամ կառուցած ավտոտնակը:
   1) ավտոտնակը 24.0քմ, մեկ քառակուսի մետրի արժեքը 780դրամ, ընդամենը 18720դրամ:
   2) 24.0քմ հողամասը՝ մեկ քառակուսի մետրի արժեքը 1242դրամ , ընդամենը 29808 դրամ:
2. Ճանաչել օրինական գյուղ Մրգաշեն 1-ին փողոց 26-2 հասցեում գտնվող Յուրիկ Սարգսյանի կողմից կառուցած օժանդակ շինությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2018թ. հունիսի 20
գ.Մրգաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. 2. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21 » հունիսի 2018 թվականի N 43

ԼԻԼԻԹ ՍՊԱՐՏԱԿԻ ԱՐԱՄՅԱՆԻ ԽՆԴՐԱՆՔԸ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշումը և 2006թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի 33,34 կետերի պահանջները և այն հանգամանքը, որ Մրգաշեն համայնքի 6-րդ փողոց, թիվ 7 հասցեում գտնվող 0.1594հա մակերեսով բնակելի կառուցապատման նշանակության, 0005-0018 ծածկագրով իր սեփական հողամասի վրա Լիլիթ Արամյանի կողմից ինքնակամ կառուցված ավտոտնակը ընդհանուր 54.6քմ մակերեսով չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օտարման կամ անվտանգության թաղամասի կառուցապատման պլաններին և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանված շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը՝ *որոշում եմ*

1.Համապատասխան վճարով ճանաչել օրինական գյուղ Մրգաշեն 6-րդ փողոց թիվ 7 հասցեում գտնվող սեփականության իրավունքով Լիլիթ Արամյանին պատկանող հողամասում ինքնակամ կառուցած ավտոտնակը:

1)ավտոտնակը 54.6քմ, մեկ քառակուսի մետրի արժեքը 780դրամ, ընդամենը 42588դրամ:

2.Ճանաչել օրինական գյուղ Մրգաշեն 6-րդ փողոց թիվ 7 հասցեում գտնվող սեփականության իրավունքով Սպարտակ Արամյանին, Միլվա Արամյանին և Լիլիթ Արամյանին պատկանող ավտոտնակը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2018թ. հունիսի 21
գ.Մրգաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21 » հունիսի 2018 թվականի N 44

ՍՊԱՐՏԱԿ ԱՐԱՄՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին » 2002թ. դեկտեմբերի 26-ի ՀՕ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի, ՀՕ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Սպարտակ Արամյանի ընտանիքին հատկացված 6-րդ փողոց թիվ 7 հասցեում գտնվող բնակելի տնով 0005-0018 ծածկագրով տնամերձ հողամասը 1999թ. քարտեզագրման ժամանակ թյուրիմացաբար գրանցվել է 0,14հա մակերեսով, որը գրվել է N 0301414 սեփականության վկայականում, սակայն նշված հողամասը իր պարագծային չափերի մեջ կազմում է 0.1594հա, քանի որ ավել օգտագործվող 0.0194հա հողամասը չի գտնվում 60 հոդվածով սահմանված հողերի ցանկում, չի առաջացնում սերվիտուտ և նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար *որոշում եմ*.

1. Ճանաչել Սպարտակ Արամյանի, Սիլվա Սիմոնի Արամյանի և Լիլիթ Սպարտակի Արամյանի սեփականության իրավունքը ըստ քարտեզում և հատակագծում նշված պարագծային չափերի արդյունքների, 0005-0018 ծածկագրով փաստացի օգտագործվող 0.0194հա մակերեսով հողամասի նկատմամբ:
2.Կատարել համապատասխան ուղղում ըստ գեոդեզիստ քարտեզագրողի կողմից ներկայացված հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2018թ. հունիսի 21
գ.Մրգաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21 » հունիսի 2018 թվականի N 45

ՄԱԿԲԵՏ ՄԻՐԶՈՅԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին » 2002թ. դեկտեմբերի 26-ի ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի, ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Մակբետ Միրզոյի Սարգսյանի ընտանիքին հատկացված է եղել 0.25հա տնամերձ հողամաս 0004-0009 բնակելի տնով: 1999թ. քարտեզագրման ժամանակ նշված հողամասը փաստացի գրանցվել է 0,25հա մակերեսով, որը և գրվել է N 0177196 սեփականության վկայականում, սակայն նշված հողամասը իր պարագծային չափերի մեջ կազմում է 0.2792հա ուստի նրա կողմից օգտագործվող 0.0292հա հողամասը չի գերազանցում նրան հատկացված հողամասի 20%-ը և չի գտնվում 60 հոդվածով սահմանված հողերի ցանկում չի առաջացնում սերվիտուտ *որոշում եմ*.

1. Ճանաչել Մակբետ Սարգսյանի սեփականության իրավունքը ըստ քարտեզում և հատակագծում նշված պարագծային չափերի արդյունքների, 0004-0009 ծածկագրով փաստացի օգտագործվող 0.0292հա մակերեսով հողամասի նկատմամբ:
2.Կատարել համապատասխան ուղղում ըստ գեոդեզիստ քարտեզագրողի կողմից ներկայացված հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2018թ. հունիսի 21
գ.Մրգաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27 » հունիսի 2018 թվականի N 46

Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ազդարարման համակարգի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն որոշման N 1 հավելվածի 1-ին կետը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշենի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Նարգիզ Գարիկի Գրիգորյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշենի համայնքապետարանի ազդարարման համար պատասխանատու անձ:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշենի համայնքապետարանի ազդարարման համար պատասխանատու անձին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանելու մասին N 272-Ն որոշմամբ սահմանված լիազորությունների իրականացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2018թ. հունիսի 27
գ.Մրգաշեն